նեանների և նոցա մօտ եկող գանգատաւոր գիւղացիների կենսական պիտոյքը. երկրորդ՝ ծառայողները, որ բոլորն էլ քրիստոնեայ են, եկեղեցի և հոգևոր պաշտամունք չ՚լինելու պատճառով զուրկ են մնում հոգևոր մխիթարութիւնից. և իրանց այս կարիքին բաւականութիւն տալու համար գնումեն Ղըղըլ—չախչախ հայաբնակ գիւղը, որ մօտ 6 վերստ հեռի է. Կայսերական տան համար յատկացեալ մաղթանքի և այլ եկեղեցական տօների օրերը ժամերգութիւն և Ս. Պատարագ տեսնելու համար.

(Շ—րո—Ն—կէւէ)

Յ. Վ. ՄՈՎՍԻՍԵԱՆ

Քաջ իմանալով՝ որ սիրելի են ընթերցողաց Ամսագրիդ նորանոր տեղեկութիւնք, մանաւանդ Հայրենեաց վերաբերեալք, փութամ ահա՛ և մի նոր Բևեռաձև 9 տող արձանագրութեան օրինակ՝ յօդուածոյս հետ միասին հասուցանել Խմբագրութեանդ ի տպագրութիւն, որ գտնուած է Նոր—Պայազիտ Գաւառի Զաղալու Հայաբնակ գիւղի մօտ եղած քարափան վրայ՝ տիրացու Աղէքսանդր Մխիթարեանի տան մօտ. որոյ միջոցաւ և Արձանագիրս ստացայ. Թէև ցարդ գտածս Բևեռաձև Արձանագրութիւնքն թուով 11 (5ն յԱրմաւիր, մին ի Ցոլակերտ, մին յԷլառ, մին յԱգամխան, մին յԱլիչալու, մին ի Մարմաշէն, և վերջինս ի Զաղալու) դեռ չեն բացատրուած իսկապէս և թարգմանված, որ լոյս և օգուտ տային ազգային կամ ընդհանուր պատմութեանն. բայց ժամանակիս հնագիտաց տաժանակիր աշխատութեանցն նայելով և հնագիտութեան մէջ մրցմանցն՝ յուսալի է որ մի օր այս արձանագրութիւնքն պսակեն բազմաշխատ հնագիտաց ջանքն ու վաստակն և լոյս ու փայլ տան Հայաստանի պատմութեանն ու աշխարհագրութեանը.

ՄԵՍՐՈՎԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

ԲԵՒԵՌԱՁԵՒ ԱՐՁԱՆԱԳԻՐ ԶԱՂԱԼՕՒԱՑ.